2025թ. ՀՈՒՆՎԱՐ

Զարգացման ծառայությունների վարչության կարևոր ծանուցում հետևյալի վերաբերյալ.

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴԱՍՈՒՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹ

Ինչ է անհրաժեշտ իմանալ

Ընդլայնված ծառայությունների համադասումը (ESC) անձակենտրոն ծառայություն է: Ստեղծվել է անապահով համայնքների անհատների համար, որոնք օգտվել են տարածաշրջանային կենտրոնի միջոցով ցածրից մինչև զրո (0-1,999 ԱՄՆ դոլար) Ծառայությունների գնումից (POS): Յուրաքանչյուր տարածաշրջանային կենտրոնի տրամադրվել է ֆինանսավորում իրենց կենտրոնում ESC սահմանված թվով անձնակազմի ձևավորման համար:

Առանձնահատկություններ

- Հատուկ վերապատրաստում անցած ծառայության համադասողներն (SCs) ունեն ESC գործերի 1:40 կրճատված բեռնվածք:
- Անձնակազմի կրճատված կազմը հնարավորություն կտա ծառայության համադասողներին ավելացնելու իրենց շփումները ESC-ի շահառու անհատների/ընտանիքների հետ:
- ESC-ն ապահովում է ընդլայնված համադասում և կենտրոնանում է տարածաշրջանային կենտրոնի ծառայությունների հասանելիության բարելավման վրա: Սա կարող է ներառել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են տան մեջ/տնից դուրս բժշկական խնամքը և տարեցների ցերեկային խնամքի ծրագրերը:
- Ծառայության համադասողները տրամադրում են ուղեցույց՝ օգնելու անհատներին/ընտանիքներին կողմնորոշվել Զարգացման հաշմանդամության ծառայությունների Կալիֆորնիայի համակարգում, այդ թվում և՝ ընդհանուր ծառայությունների և հանրային գործակալությունների ու կազմակերպությունների միջոցով հատկացվող աջակցության հարցում: Սա կարող է ներառել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են CalFresh-ը, երեխայի Անհատականացված կրթության ծրագրերը (IEP), Medi-Cal-ը և Medicare-ը:
- Զարգացման ծառայությունների վարչությունը կուղարկի հարցաթերթիկներ՝ ESC-ի շահառու անհատներից/ընտանիքներից կարծիքներ հավաքելու համար:
- ESC-ն կամընտիր է: Անհատները/ընտանիքները կարող են ցանկացած պահի որոշում կայացնել դադարեցնելու ESC-ի ծառայությանը մասնակցությունը:

Ընդլայնված ծառայության համադասման մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ծառայության համադասողին կամ տարածաշրջանային կենտրոն:
Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել նաև DDS կայքում:

DDS Department of Developmental Services